Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2025-2026 ուս. տարի
**10 – րդ դասարան**

**1.** ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-սխալ; դ-սխալ; ե-ճիշտ; զ-սխալ; է-սխալ; ը-ճիշտ (յուր.՝ **0.25միավոր**)

**2. ա.** Գետի նախկին հունի այն հատվածը, որն այլևս ջրով չի ծածկվում (**0.5միավոր**):
**բ.** Քամու արագությունը որոշող սարք (**0.5միավոր**): Եթե արագությունը նշված չէ, միավոր չի տրվում

**3.** Մեքսիկա

**4.** **ա.** Երկրաջերմային կամ գեոթերմալ (**1միավոր**)
**բ.** Կանաչ հեղափոխություն (**1միավոր**)

**5. ա.** 1) Շարժվեց մարտի 21-ին (**0.5միավոր**)
2) 240 : 5 = 48 ժամ (**0.25միավոր**)
3) մարտի 21 + 2օր = մարտի 23 (**0.25միավոր**)

**բ.** Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Տոկոսների փոխարեն կարող են գրված լինել բեռնաշրջանառության բացարձակ արժեքները: Բեռնաշրջանառության որոշման սխալի կամ այլ բնույթի տրամագրով պատկերելու դեպքում միավոր չի տրվում: Տեխնիկական թերացումների դեպքում՝ առավելագույնը **0.5միավոր:**




**6.** Պատկերը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Բովանդակային ցանկացած սխալի դեպքում քարտեզի համար **միավոր չի տրվում**: Հետևյալ թերություններից յուրաքանչյուրի համար նվազեցվում է **0.5միավոր.** բացակայում է վերնագիրը, բացակայում են մարզերի մակնշումները, բացակայում է հստակ ձևավորած պայմանական նշանների համակարգը; Հյուսիսի ուղղությունը և մասշտաբը ավելացված չեն:
**ա.** 3 (**0.5միավոր**),
**բ.** Կոտայք (**0.5միավոր**):




**7. Զվարթնոց օդանավակայանից հեռավորության աճին զուգահեռ** ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում Հայաստանը ներկայացված է հետևյալ հուշարձաններով՝ Զվարթնոցի տաճար, Էջմիածնի Մայր տաճար և եկեղեցիներ, Գեղարդավանք, Սանահին, Հաղպատ:
Իր դիրքում յուրաքանչյուր ճիշտ նշված պատասխանի համար տրվում է **0.25միավոր**

**8. ա.** Որբանիզացիայի շարունակական աճը հանգեցրել է մարդկանց՝ բնության հետ շփման սահմանափակման, ինչն իր հերթին ծնել է այդ շփումը լրացնելու պահանջ: Քանի որ գյուղական և էկոտուրիզմը, ինչպես և կանաչ զբոսաշրջության այլ տեսակներ մեծապես միտված են բնության հետ կապերի վերականգնմանը, դրանց պահանջարկը մեծապես աճել է: Թերի պատասխանների կամ երկրորդական նշանակության գործոնների դեպքում առավելագույնը 0.5 միավոր:

**բ.** Լիթիումը քիչ տարածված, սակայն տնտեսական մեծ կարևորություն ունեցող ռեսուրսներից է, քանի որ մեծապես կիրառվում է լիթիումային մարտկոցների արտադրության գործում: Վերջիններիս պահանջարկն աշխարհում ահռելի է և այս քայլով Ինդոնեզիան փորձում է սեփական երկրում մարտկոցների արտադրությունը խթանել և մարտկոցների շուկայում էական դերակատարում ստանձնել: Թերի պատասխանների համար առավելագույնը 0.5միավոր:

**9. ա.** Ասիայում ուժեղ, դրական կոռելյացիա է **(0.5միավոր):** Եվրոպայում կոռելյացիան թույլ է/բացակայում է **(0.5միավոր):** Թերի պատասխանների դեպքում տրվում է 0.25միավոր:

**բ.** Ամենաուժեղը Աֆրիկայում է (**0.5միավոր**): Ըստ ՀՆԱ/շունչ ցուցանիշի աճի կոռելյացիան նվազում է (**0.5միավոր**):

**10. ա.** Հասարակածային կամ 0-5$^0$ (**0.5միավոր**): Պտտահողմերի ձևավորման կարևորագույն նախադրյալներից է Կորիոլիսի ուժը, որը չի գործում հասարակածում (**0.5միավոր**):

**բ.** Հարավային (**0.5միավոր**): Հիմնական պատճառներն են Հարավային բևեռի շուրջ Արևմտյան քամիների սառը հոսանքի առկայությունը, որը գոտևորում է բևեռամերձ լայնությունները, ինչպես նաև սառցապատ Անտարկտիդա մայրցամաքի առկայությունը: Համեմատած հյուսիսային բևեռի՝ այստեղ սառցածածկն այնքան հզոր է, որ մեծապես պահպանվում է նույնիսկ ամռանը՝ մեծացնելով ալբեդոն և նաստելով սառցածածկի պահպանմանը:

Այլ՝ երկրորդական, պատասխանների դեպքում՝ **0.25միավոր**

**11.** Ա-3; Բ-2; Գ-4; Դ-1 (**յուր. 0.5միավոր**)